ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2



HABITUS 2

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

2

H A B I T U S

STUDIES IN ANTHROPOLOGY AND ARCHAEOLOGY

2

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

2

H A B I T U S

АНТРОПОЛОГИЧЕСКИЕ И АРХЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

2

«GITUTYUN» PUBLISHING HOUSE
YEREVAN 2017

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН»
ЕРЕВАН 2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4
Հ 125

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ.
Պավել Ավետիսյան (*գլխավոր խմբագիր*), Լևոն Աբրահամյան, Գրեգորի Արեշյան, Ռուբեն Բադալյան, Պիտեր Քաուի, Տորք Դալալյան (*պատասխանատու քարտուղար*), Պատրիկ Տօնապետեան, Միհրան Գալստյան, Սարգիս Հարությունյան, Թամար Հայրապետյան, Լորի Խաչատուրեան, Թեո վան Լինտ, Հարություն Մարության, Արմեն Պետրոսյան, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Ջուստո Տրաինա

Editorial Board:
Pavel Avetisyan (*editor-in-chief*), Levon Abrahamian, Gregory Areshian, Rouben Badalian, Peter Cowe, Tork Dalalyan (*assistant editor*), Patrick Donabédian, Mihran Galsyan, Sargis Harutyunyan, Tamar Hayrapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Armen Petrosyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina

Համարի գրախոսներ՝
Հարություն Մարության, *պատմական գիտությունների դոկտոր*
Արսեն Բոբոխյան, *պատմական գիտությունների թեկնածու*

Համարի խմբագիրներ՝
Համլետ Մելքումյան, *պատմական գիտությունների թեկնածու*
Ռոման Հովսեփյան, *կենսաբանական գիտությունների թեկնածու*

Մարդաբանություն, հնագիտություն թեմատիկ երգիծանկարների հեղինակ՝ ազգագրագետ Լևոն Աբրահամյան

The volume is edited by Hamlet Melkumyan *and* Roman Hovsepyan
The cartoons are authored by Levon Abrahamyan, *anthropologist*

Հ 125 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2: ՀԱԲԻ-ՏՈՒՍ 2: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ. Խմբ. Հ. Մելքումյան, Ռ. Հովսեփյան – Եր.: Գիտություն, 2017. – 264 էջ:

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4

ISBN 978-5-8080-1293-6

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սուսաննե Ֆիլինգս
Հայոց պատմությունը քաղաքային առօրեականության մեջ 10

Համլետ Մելքումյան
Հիշողությունից ազգայնականությո՞ւն,
խորհրդային և հետխորհրդային հուշարձանները 42

Էլեն Գրիգորյան
Եվրատեսիլ երգի մրցույթը որպես ինքնությունների,
ազգայնականության և քաղաքականության արտահայտման բեմ 65

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Մանուկյան
Կյանքը դեֆիցիտի պայմաններում. կանացի հագուստի
պրակտիկաները Երևանում 1970-80-ականներին 93

ՍՓՅՈՒՌՔ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էլլի Պոնոմարյովա
Բնիկ թիֆլիսցիներ թե՞ Սփյուռք. քննարկում թիֆլիսաբնակ
հայերի կարգավիճակի շուրջ 117

Սյուզաննա Բարսեղյան
Հայկական մամուլի դերը Սփյուռքում էթնոմշակութային արժեքների վերար-
տադրման և տարածման գործում 142

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԲՌՆԱԳԱՂԹ

Շուշանիկ Ղազարյան
ՀՀ-ում ադրբեջանահայ փախստականների ինտեգրման
գործընթացում հայերենի իմացության խնդիրը 152

Հասմիկ Գրիգորյան
Հայոց ցեղասպանությունից մինչև «քառօրյա պատերազմ».
բռնության օրինականացման մշակութային գործոնները 163

Լուսինե Տանաջյան
Սոցիալ-մասնագիտական ինտեգրման առանձնահատկությունները
Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 184

Սոնա Ներսիսյան
Ցանցային հարաբերությունները Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 195

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռոման Հովսեփյան
Հնաբուսաբանական նմուշառում. դաշտային աշխատանքների ուղեցույց 212

Արթուր Պետրոսյան
Քարե գործիքների ուսումնասիրության մեթոդոլոգիան 217

Աննա Ազիզյան
Դիտողություններ Հայաստանի կուր-արաքսյան խեցեղենի հազվադեպ հանդիպող զարդաձևերի վերաբերյալ 238

Ավետիս Գրիգորյան
Սոթքի տարածաշրջանի անտիկ և միջնադարյան հուշարձանները 249

CONTENTS

CULTURAL ANTHROPOLOGY

IDENTITY AND NATIONALISM IN PUBLIC SPACES

Susanne Fehlings
Armenian History in Urban Everyday Life 10

Hamlet Melkumyan
From Memory to Nationalism?
The Soviet and post-Soviet Memorials in Rural Daily Life 42

Elen Grigoryan
Eurovision Song Contest as a Stage: Performing Identities,
Nationalism and Politics 65

SOVIET DAILY LIFE

Lilit Manukyan
Living in Deficiency: Female Clothing Practices in Yerevan in 1970-80s 93

DIASPORA AND NATIONALISM

Elli Ponomareva
Native Tbilisians or Diaspora: Negotiating the Status
of Armenians in Tbilisi 117

Syuzanna Barseghyan
The Role of Armenian Press in Reproduction and Dissemination
of Ethnic and Cultural Values in the Diaspora 142

WAR AND FORCED MIGRATION

Shushanik Ghazaryan
The Importance of Armenian Language in the process of integration
of Armenian refugees from Azerbaijan in Republic of Armenia 152

Hasmik Grigoryan
From The Armenian Genocide to the “4-Day War”
Cultural Factors of Violence Legalization 163

Lusine Tanajyan
Social-professional Features of Integration of Syrian-Armenian
Immigrants in Armenia 184

Sona Nersisyan
Network Relations among Syrian-Armenian Immigrants in Armenia 195

ARCHAEOLOGY

Roman Hovsepyan
Archaeobotanical sampling: Instructions for fieldwork 212

Artur Petrosyan
Methodology for the Study of Stone Artefacts 217

Anna Azizyan
Remarks on the Rare Ornaments of Kura-Araxes Ceramics of Armenia 238

Avetis Grigoryan
The History of Investigation of Antique
and Medieval Sites of the Sotk Region 249

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



CULTURAL ANTHROPOLOGY

10

Սոնա Ներսիսյան

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Սփյուռքի հետազոտությունների բաժին

Ցանցային հարաբերությունները Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում

Տեղափոխությունը դեպի նոր միջավայր ներգաղթյալից պահանջում է ջանքերի մոբիլիզացում՝ տեղափոխման արդյունքում առաջացած խնդիրների հաղթահարման նպատակով: Այն առաջ է բերում մի շարք անխուսափելի գործընթացներ, որի արդյունքում ներգաղթյալն ընտրում է ինքնակազմակերպման և ադապտացիայի որոշակի եղանակ:

Հոդվածը նպատակ ունի ուսումնասիրել ցանցային հարաբերությունները[1]՝ որպես նոր միջավայր տեղափոխված խմբի ադապտացիայի կարևոր գործոն: Այդ նպատակով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ցույց տալ ցանցային հարաբերությունների դերը էթնիկ խմբի ադապտացման գործում,
- պարզել սիրիահայերի ներգրավվածության աստիճանը Հայաստանի սոցիալական միջավայրում,
- համեմատել նրանց սոցիալական ներգրավվածության աստիճանը Սիրիայի ազգային կառույցներում[2] և հայաստանյան կազմակերպություններում (մարզական, մշակութային միություններ, ակումբներ, խմբակներ և այլն):

Աշխատանքը հիմնված է վերջին երեք տարիներին Հայաստան ներգաղթած սիրիահայերի էթնոսոցիոլոգիական հետազոտության վրա: Այն իրականացվել է 3 մեթոդների՝ ֆոկուս-խմբային հարցման, փորձագիտական հարցման և ձևայնացված հարցաթերթիկով հարցման հիման վրա:

Բանալի բառեր. *ներգաղթյալ, սիրիահայեր, ցանցային հարաբերություն, ադապտացիա, ինքնակազմակերպում, ինտեգրում:*

---

1 Ցանցային տեսությունը - սոցիոլոգիայում ռելացիոն (անգլ. relation – հարաբերություն) ուղղություն է, որի շրջանակներում ակտորի դիրքը ցանցում դիտարկվում է մի կողմից որպես իր սոցիալական վարքի որոշիչ, մյուս կողմից՝ որպես սոցիալական կապիտալ, որը թույլ է տալիս իրականացնել սեփական գործառույթները: *Ցանցային հարաբերությունը* ցանցում ակտորների միջև եղած հարաբերություններն են (*հմմտ.* Barnes 1954: 39-58) :

Օտար միջավայրում էթնիկ խմբի համար սոցիալական ցանցերն առանձնահատուկ նշանակություն ունեն, քանի որ դրանց ներսում իրագործվում և բավարարվում են նրա անդամների ինքնության պահպանման, սոցիալական ռեսուրսների տիրապետման, խմբի ներսում ու դրանից դուրս փոխհարաբերությունների հարմարավետության ապահովման պահանջները: Սոցիալական ցանցերի միջոցով հնարավորություն է ընձեռվում ձևավորել էթնիկ խմբի ինքնակառավարման կառուցվածքներ, որոնց գործառույթները պայմանավորված են ցանցում ստեղծված նոր և հին կապերի գոյությամբ:

2 Տվյալ ձևակերպումը պատկանում է սփյուռքի հայերին: Դա ընդհանրական անվանում է. այսինքն առանձին-առանձին կառույցները կարող են ունենալ ամենատարբեր գործառույթներ՝ սոցիալական, մարզական, մշակութային և այլն: Յուրաքանչյուր համայնքում դրանք կարող են տարբերվել, և միևնույն կառույցը կարող է իրականացնել հարակից այլ գործառույթներ: Այս աշխատանքում ևս դրանք ընդհանրական ձևով անվանվում են որպես ազգային կառույցներ:

Sona Nersisyan

Institute of Archaeology and Ethnography
Department of Diaspora Studies

Network Relations among Syrian-Armenian Immigrants in Armenia

Moving to the new social environment demands mobilization of efforts from the migrant for overcoming the problems which resulted by moving. It accrues a number of unavoidable processes, therefore a migrant chooses a certain way of adaptation and self-organization.

It is important to study promoting or, on the contrary, hindering factors of adaptation, to find out the mechanisms of functioning of self-organization and adaptation of an ethnic group in the new environment. In this casesocial relations act as a factor of adaptational behaviour in new environments and perform role of regulators of self-organization of ethnic group

This report aims to examine the network relationship as a key factor of adaptation of moved ethnic group into new environments.

For that purpose following issues are brought out.

- to point the role of the network relations in the ethnic group's adaptation
- to Identify the degree of involvement of Syrian-armenians in the social environment of Armenia
- to compare the level of their social involvement in the national organizations of Armenia and Syria.

The work is based on ethno-sociological research of Syrian-armenian immigrants from Siria to Armenia, who immigrated during last three years. The research has been implemented by 3 methods (research-focus-group poll, expert interview and poll with formalized questionnaire).

Key words: *immigrant, syrian armenians, network relations, adaptation, self organization, integration.*

Сона Нерсисян

Сетевые отношения среди сирийских армян в Армении

С переездом в новую социальную среду адаптация и самоуправление этнической группы сопровождается множеством влияющих факторов, одним из которых являются сетевые отношения. Целью статьи является изучение сетевых отношений на примере сирийских армян в Армении. Статья основана на исследование сирийских армян в Армении, которое было проведено с помощью методов фокус группы, экспертного опроса, формализованного опроса.

■■■

Նոր միջավայրում էթնիկ խմբի ինքնակազմակերպման և ադապտացիայի մեխանիզմների գործառնության բացահայտման համար կարևոր է պարզել դրան նպաստող, կամ, ընդհակառակը՝ խանգարող գործոնները: Սոցիալական հարաբերությունները տվյալ դեպքում հանդես են գալիս որպես ադապտացիոն վարքի գործոն և նոր միջավայրում կատարում են էթնիկ խմբի ինքնակազմակերպման կարգավորիչի դեր:

Ներգաղթյալի ադապտացիան կարելի է պատկերացրել որպես տեղափոխման ընթացքում առաջացած խնդիրների կարգավորման միաժամանակյա կամ հետևողական գործընթաց: Կախված կոնկրետ հանգամանքներից՝ այդ խնդիրները և դրանց լուծումները կարող են ստանալ կարևորության տարբեր աստիճան:

Ադապտացիայի երևույթը կապված է եկվոր տարբեր խմբերի և շրջապատի միջև փոխգործակցության հետ, հետևաբար՝ դրանք կարող են նկարագրվել սոցիալական ադապտացման հատկանիշներով: Սակայն նախքան այդ երևույթների և գործընթացների վերլուծությանն անցնելը հարկ է անդրադառնալ սոցիալական ադապտացիա հասկացության ճշգրտմանը և օպերացիոնալիզացման խնդրին:

Այսպիսով, սոցիալական ադապտացիան անհատի կամ խմբի՝ նոր միջավայրի պայմաններին հարմարման ակտիվ գործընթաց է, որն իրականանում է ընդհանուր նորմերի, արժեքների, վարքականոնների ընդունման հիման վրա: Սրա արդյունքում տեղի են ունենում անձնային որոշակի փոփոխություններ, որոնք թույլ են տալիս անհատին նույնականացվել տվյալ հասարակության արժեքային կողմնորոշումները կրողների հետ[3] (Кузнецов 1991: 3): Սոցիալական ադապտացիայի մյուս հնարավոր ուղին էվոլուցիոնն է, որի ժամանակ անձը փորձում է հասկանալ, ապա նաև ընդունել և աստիճանաբար յուրացնել տվյալ հասարակության մեջ գերիշխող սոցիալական կարգերն ու նորմերը:

Սոցիալական ադապտացիայի ուսումնասիրության համար անհրաժեշտ են որակական և վիճակագրական նշանակություն ունեցող ցուցանիշներ: Դրանք են ներգաղթյալների կենսաապահովման, սոցիալական մոբիլության, սոցիալական կապերի, սոցիալական կյանքին նեգրավվածության, արժեքային կողմնորոշումների մասին ցուցանիշները: Տվյալ բնակավայրում այս ցուցանիշների համեմատությունը ներգաղթած բնակչության առանձին խմբերի միջև թույլ է տալիս դուրս բերել բնակչության տարածական և սոցիալական շարժի փոխազդեցությունների բնույթը:

Հայերի համար, ի տարբերություն Սիրիայի այլ էթնիկ և կրոնական խմբերի, Հայաստանի ընտրությունը որպես տեղափոխման երկիր, այնուամենայնիվ, օպտիմալ էր: Հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ նոր միջավայր ներթափանցման պարագայում նորեկները հայտնվում են տվյալ միջավայրին ադապտացվելու գործընթացի մեջ, որի ժամանակ նրանք կարող են կամ ինտեգրվել, կամ արտամղվել:

Սիրիահայերի համար այս գործընթացը էթնիկ հայրենիքում կարող է տեղի ունենալ մարդկային կենսագործունեության լայն շրջանակներում, որտեղ առանձնահատուկ նշանակություն ունի սոցիալական գործունեության և հա-

3 Պ.Ս.Կուզնեցովն առաջարկել է ադապտացիան դիտարկել երեք տեսանկյունից՝ որպես միջոց, բավարարվածություն և անձի զարգացման գործառույթ: Այս ուղղության շրջանակներում ադապտացիան դիտարկվում է որպես անձի կողմից գոյության արտաքին և ներքին պայմանների ընդունման կամ չընդունման ներքին խթանման գործընթաց (Кузнецов. 1991, էջ 76):

բաբերությունների ոլորտը: Այս ոլորտում կարող են դրսևորվել նոր պայմաններում կենսագործունեության համեմատաբար նշանակալի ցուցանիշներ և ստեղծվել միջավայրի հետ նրա փոխազդեցության հիմնարար տարրեր: Սա իր որակական ցուցանիշներով միանգամայն հակասական և տարաբնույթ գործընթաց է, որը պահանջում է համակողմանի տեսական մշակումներ: Վերջիններիս պահանջը ծագում է մեթոդաբանական մոտեցումների մշակման, փոփոխականների առանձնացման, ապա նաև կիրառական մակարդակում սահմանման ենթակա ցուցիչների անհրաժեշտությունից: Սա կարևոր է, քանի որ այս գործընթացների բնույթի ճանաչման էմպիրիկ մակարդակը հետագայում թույլ կտա անցնել գիտելիքի հաջորդ մակարդակ:

Ներկայացված մեթոդաբանական մոտեցումներում պարզորոշ է հետևյալը. փախստականների ներմղման կամ արտամղման գործընթացի ցուցիչների արտահայտվածությունը նոր միջավայրում, կարելի է արձանագրել կոնկրետ ցուցանիշներով, որոնք դուրս են բերվել փախստականների հետ ձևայնացված հարցման արդյունքում: Որպես ադապտացիոն վարքի առաջնային ցուցանիշ կարելի է դիտարկել սիրիահայերի հետագա ծրագրերի մտադրությունը. այն թույլ կտա պարզել բոլոր այն պայմանները, որոնք բացակայում կամ խանգարում են Հայաստանում բնականոն կենսագործունեության համար: Դա նաև կօգնի ընդունող երկրին՝ մշակել համապատասխան ռազմավարություն: Այս նպատակով դիտարկվել են մի շարք գործոններ, որոնք այս կամ այն կերպ կապված են սիրիահայերի հետագա մտադրությունների հետ: Փորձ է արվել պարզել, թե որ գործոնն ինչ չափով է ազդում սիրիահայերի հետագա ծրագրերի վրա:

Աշխատանքը հիմնված է Սիրիայից Հայաստան ներգաղթած սիրիահայերի ադապտացման և ինտեգրման խնդիրների էթնոսոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքների վրա: Հետազոտությունն իրականացվել է երեք՝ ֆոկուս-խմբային հարցման, փորձագիտական հարցազրույցների և ձևայնացված հարցաթերթիկով հարցման մեթոդներով[4]: Աշխատանքում օգտագործվել են ձևայնացված հարցաթերթիկով հարցման տվյալները:

Ելնելով հարցման տվյալներից՝ կարող ենք առանձնացնել գործոնների չորս հիմնական խումբ. 1) Հայաստան տեղափոխված սիրիահայերի սոցիալական հատկանիշները, 2) Հայաստանում նրանց մոտ անհանգստություն առաջացնող խնդիրները, 3) սոցիալական դաշտում սիրիահայերի ներգրավվածության աստիճանը Սիրիայում և Հայաստանում, 4) սոցիալ-մասնագիտական ադապտացիայի ցուցանիշները:

Գծապատկեր 1-ը ցույց է տալիս սիրիահայերի կողմնորոշվածությունը և հետագա մտադրությունները:

4 Էթնոսոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է քանակական և որակական մեթոդներով՝ «Սիրիայից Հայաստան ներգաղթած հայերի ադապտացման և ինտեգրման խնդիրների լուծման ուղիները» 13-6F368 ծածկագրով թեմատիկ ծրագրի շրջանակներում (2013-2015 թթ.): Ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի սփյուռքի հետազոտությունների բաժնի կողմից (Սիրիահայերը Հայաստանում... 2015: 172):

Գծապատկեր 1.
Սիրիահայերի՝ ապագայի հետ կապված մտադրությունները
(% հարցվածներից)



Ստացված գծապատկերից երևում է, որ հարցվածների գրեթե կեսը (45%) մտադիր է վերադառնալ Սիրիա, մեկ երրորդը (33%) ցանկանում է հաստատվել Հայաստանում, իսկ ամեն չորրորդը (22%) ծրագրում է մեկնել արտասահման: Հաշվի առնելով, որ իրավիճակը Սիրիայում դեռևս շարունակում է մնալ օրհասական, ուստի պետք է համարել, որ Սիրիայից Հայաստան գաղթածները ևս լիովին կողմնորոշված չեն այս հարցում. նրանց հետագա ծրագրերը դեռևս խիստ կախված են իրավիճակային փոփոխություններից:

Այս առումով հետաքրքիր է ներգաղթյալների հետագա պլանների կապը նրանց սոցիալ-ժողովրդագրական հատկանիշների հետ:

Համաձայն հետազոտության արդյունքների՝ Սիրիա վերադառնալու մտադրություն ունեցող սիրահայերի 48%-ը իգական, իսկ 52%-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ են (տե՛ս գծապատկեր 2): Ստացվում է, որ երկու խմբի ամեն երկրորդը հավասարաչափ հակված է Սիրիա վերադառնալու որոշմանը, քանի որ այնտեղ առավել հեշտ էին լուծվում ֆինանսական խնդիրները: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ կանանց համար հայաստանյան միջավայրն ավելի հանգիստ ու ապահով է թվում: Չի բացառվում, որ կանայք այստեղ ավելի ազատ են զգում իրենց, քան սիրիական միջավայրում, և, հնարավորության պարագայում, կարողանում են նույնիսկ որոշակի տնտեսական ակտիվություն ցուցաբերել: Իսկ տղամարդկանց համար Սիրիա չվերադառնալու հանգամանքը հավանաբար պայմանավորված է անվտանգության և ապահովության երաշխիքի բացակայությամբ:

Սիրիա վերադառնալու ցանկություն արտահայտած խմբի 35%-ը կազմում են մինչև 40, իսկ մեկ ու կես անգամ ավելի (65%)՝ 40-ից բարձր տարիքի անձինք: Այսպիսով, Սիրիա վերադառնալու ցանկությունն ավելի շատ է արտահայտված մեծահասակների մոտ: Սա կարելի է բացատրել մի շարք պատճառներով: Առաջին՝ բարձր տարիքի անձինք, ըստ երևույթին, մեծ է հավանականությունը, որ Սիրիայում թողել են սեփականություն, տնտեսական կապիտալ և ձգտում են այն պահպանել: Մյուս պատճառն այն է, որ մեծահասակներն ավելի մեծ դժվարություններ են ունենում նոր միջավայրին հարմարվելու հարցում, քան երիտասարդները, ուստի նրանք չեն շտապում կամ չեն կարողանում ին-

տեգրվել նոր միջավայրին, այլ նախընտրում են վերադառնալ, ինչը հնարավորություն կտա վերականգնել իրենց նախկին սոցիալական կապերը, շարունակել իրենց նախորդ կյանքի հունը: Սա բացատրվում է նրանով, որ նախկինում հաստատված միջանձնային հարաբերություններն ավելի մեծ նշանակություն ունեն մեծահասակների, քան երիտասարդների համար: Ելնելով տարիքային առանձնահատկություններից՝ հավանաբար մեծահասակները քիչ են հակված նոր հարաբերություններ ստեղծելուն:

Գծապատկեր 2.
Սիրիա վերադառնալու մտադրությունն ըստ սոցիալական կազմի
(% հարցվածներից)



Ինչ վերաբերում է Սիրիա վերադառնալու մտադրություն ունեցողների սոցիալական հատկանիշներին, ապա առաջին հերթին անհրաժեշտ է անդրադառնալ նրանց կրթամակարդակին: Նրանց մեծամասնությունը (46%) ունի բարձրագույն կրթություն, 34%-ը՝ միջին մասնագիտական, և 20%-ը՝ միջնակարգ: Գուցե սա պայմանավորված է նրանով, որ բարձրագույն կրթությամբ անձինք դժվարությամբ են կարողանում գտնել իրենց հարմար աշխատանք Հայաստանում և կարծում են, որ իրենց երկրում ավելի մեծ հնարավորություններ կունենային ցանկալի աշխատանք գտնելու գործում: Իհարկե, այս դեպքում բարձրագույն կրթությամբ Սիրիա վերադառնալ մտադրվածների թիվն, այնուամենայնիվ, ավելի ցածր է, քան այլ երկիր գնալ ցանկացողներինը:

Դիտարկելով Սիրիա վերադառնալու ցանկություն ունեցող խմբի ընտանեկան կարգավիճակի ցուցանիշները, տեսնում ենք, որ նրանց ճնշող մեծամասնությունն ամուսնացած է (78%): Հետազոտության տվյալներից պարզ է դառնում, որ նախկին միջավայր վերադառնալու որոշման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան կարգավիճակը, ինչպես նաև այն հանգամանքը, թե ում հետ է բնակվում հարցվողը մուտքի երկրում:

Ըստ ստացված տվյալների ՝ Հայաստանում հաստատվելու մտադրություն ունեցող սիրահայերի 36%-ն իգական և 64%-ն արական սեռի ներկա-

յացուցիչներ են (տե՛ս գծապատկեր 3)։ Համադրելով այս տվյալներն այլ երկիր մեկնելու մտադրության հետ՝ կարելի է նկատել որոշակի հակասություն։ Պատճառն այն է, որ հարցվածների մեծամասնությունը դեռևս չունի հստակ կողմնորոշվածություն այս հարցում, և դա կախված է մի շարք օբյեկտիվ գործոններից։ Ուստի ստացված տվյալները միայն հարաբերականորեն կարելի է դիտարկել որպես օբյեկտիվ պատճառների արդյունք։

Գծապատկեր 3.
Հայաստանում հաստատվելու մտադրությունն ըստ սոցիալական կազմի (% հարցվածներից)



Հայաստանում հաստատվելու մտադրություն ունեցողների 39%-ը մինչև 40, իսկ 61%-ն ավելի բարձր տարիքի են։ Այստեղ համամասնությունը գրեթե նույնն է, ինչ Սիրիա մեկնել ցանկացողների պարագայում։ Այս դեպքում ևս առկա է մեծահասակների՝ միջավայրային փոփոխություններին բացասաբար արձագանքելու երևույթը։ Հայաստանում հաստատվելու մտադրություն հայտնածների 52%-ն ունի բարձրագույն կրթություն, 14%-ը՝ միջին մասնագիտական, իսկ 34%-ը՝ միջնակարգ։

Սոցիալական կազմի հաջորդ ցուցիչը ընտանեկան կարգավիճակն է, ըստ որի, Հայաստանում մնալու ցանկություն հայտնածների ճնշող մեծամասնությունն ամուսնացած է (73 %)։ Հասկանալի է, որ հաստատվելու որոշում ընդունելու համար կարևոր գործոն է ընտանիքի առկայության պայմանը։ Այստեղ հետաքրքիր է պարզել նաև, թե ամուսնացածների որ մասն է Հայաստանում ապրում իրենց ընտանիքների հետ (տե՛ս գծապատկեր 4)։

Գծապատկերից պարզ է դառնում, որ Հայաստանում հաստատվելու ցանկություն ունեցող և ամուսնացած հարցվածների բացարձակ մեծամասնությունն այստեղ ապրում է ընտանիքի հետ, որից 75%-ը՝ մեծ ընտանիքի։ Հասկանալի է, որ այս դեպքում այլևս չկա ընտանիքը նույն տարածքում միավորելու խնդիր, ուստի կարող ենք ասել, որ իրենց հետագա ծրագրերի հետ կապված որոշումները բխում են զուտ տնտեսական, ֆինանսական, սոցիալ-հոգեբանական գործոններից։ Այս միտքը հաստատվում է նրանով, որ

տվյալ խմբի ներկայացուցիչների մեծ մասն ապրում է մեծ ընտանիքով, ինչը չի նկատվել նախկինում՝ ելքի երկրում: Սա ևս մեկ միջոց է՝ կրճատելու առանձին անհատի վրա ազդող նոր միջավայրի արտաքին գործոնները:

Գծապատկեր 4.
Հայաստանում հաստատվելու մտադրություն ունեցող սիրիահայերի ընտանեկան կազմը (% հարցվածներից)



Ըստ հարցման տվյալների՝ այլ երկիր գնալու մտադրություն ունեցող սիրիահայերի 31%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 69%-ը՝ արական (տե՛ս գծապատկեր 5): Կանայք հիմնականում չեն ցանկանում մեկնել այլ երկիր՝ խուսափելով միջավայրային կտրուկ փոփոխություններից: Հավանաբար սա բացատրվում է նրանով, որ Սիրիայում կանանց անկախ գործունեությունը սահմանափակ է եղել: Այլ երկիր մեկնել ցանկացողների խմբի 57%-ը մինչև 40 տարեկան են: Հասկանալի է, որ երիտասարդներն ավելի դյուրին են ադապտացվել նոր միջավայրին. նրանք ավելի պատրաստ են կյանքի նոր փոփոխություններին ու շրջադարձերին, ինչպես նաև ավելի քիչ են կապված սեփականության հետ:

Այլ երկիր գնացողների մեծամասնությունը՝ 51%-ն ունի բարձրագույն կրթություն, 35%-ը՝ միջնակարգ, իսկ 14%-ը՝ միջին մասնագիտական: Ենթադրվում է, որ բարձրագույն կրթությամբ անձինք ավելի մեծ ինքնահիրացման հնարավորություն և ներուժ ունեն տարբեր միջավայրերում: Միջնակարգ կրթությամբ անձինք, հավանաբար, ձգտում են այլ երկրում գտնել առավել հեշտ ապրուստի միջոց և օգտվել փախստականի կարգավիճակից:

Դիտարկելով նույն խմբի ընտանեկան կարգավիճակի ցուցանիշի հարաբերակցությունն այլ երկիր տեղափոխվելու մտադրության հետ՝ տեսնում ենք, որ ընտանեկան կարգավիճակն այնքան էլ կարևոր դեր չի կատարում այլ երկիր մեկնելու մտադրության առաջացման համար (ամուսնացածների և չամուսնացածների հարաբերակցությունն այս խմբում գրեթե հավասար է՝ 46% և 54% համապատասխանաբար):

Ներգաղթյալների հետագա մտադրություններն ու ծրագրերը կախված են մի շարք գործոններից և ընդհանուր սոցիալական ցուցանիշներից՝ սեռ,

տարիք, զբաղվածություն և այլն: Գծապատկեր 5-ում ներկայացված են գաղթյալների հետագա ծրագրերը: Նրանց մտադրություններն արտահայտվում են երեք հիմնական տարբերակով՝ մեկնել այլ երկիր, վերադառնալ Սիրիա կամ մնալ Հայաստանում: Այս պարագայում տարիքը, սեռն ու Սիրիայում նրանց զբաղվածության ոլորտն ու մասնագիտությունը դառնում են հետագա միգրացիոն վարքի ցուցիչներ: Այս հատկանիշների միջոցով նաև հնարավորություն է ընձեռվում հետևություններ անել ադապտացիոն գործընթացների մասին: Վերջինիս հիմնավորման համար համադրվում են ողջ համախմբությունից ընտրված 10% հարցվածների կրկնակի հարցման տվյալները, այսպես կոչված, պանելային հարցման երկրորդ փուլի արդյունքները:

Գծապատկեր 5.
Այլ երկիր տեղափոխվելու մտադրությունն
ըստ սոցիալական կազմի (% հարցվածներից)



Սիրիահայերի աշխատանքային գործունեության տեսակները համեմատվել են երկու տարբեր միջավայրերում՝ Սիրիայում (նախքան գաղթը) և Հայաստանում (գաղթելուց անմիջապես հետո), ապա՝ Հայաստանում գտնվելու սկզբում և երկու տարի անց: Դրանով հնարավորություն ընձեռվեց ստանալ սոցիալ-մասնագիտական մի քանի խմբերի (Карапетян 2013: 95-96) ադապտացիոն գործընթացների խորապատկերը՝ երեք կտրվածքով դինամիկ պատկերի և միգրացիոն տրամադրությունների ցուցանիշների համադրության միջոցով: Առանձնացված խմբերը հետևյալն են.

- Ա՝ բարձրագույն կրթությամբ մտավոր աշխատանք կատարողներ,
- Բ՝ սպասարման ոլորտի աշխատողներ,
- Գ1՝ հատուկ պատրաստվածությամբ ֆիզիկական աշխատանք կատարողներ,
- Գ2՝ առանց պատրաստվածության ֆիզիկակական աշխատանք կատարողներ և չաշխատողներ:

Գծապատկեր 5.
Հայաստանում ապաստան գտած սիրիահայերի միգրացիոն տրամադրությունների ձևավորման սոցիալ-ժողովրդագրական գործոնները (% հարցվածներից)



Այսպիսով, Սիրիա վերադառնալու մտադրություն ունեցողների խումբը կազմված է հիմնականում Գ1 և Գ2 խմբերի 40-ից բարձր տարիքի տղամարդկանցից, ինչպես նաև Գ2 և Ա խմբերի 40 տարեկանն անց կանանցից: Ավելի նվազ ակտիվություն են ցուցաբերում բոլոր տարիքների տղամարդկանց մեջ չաշխատողների խումբը, 40-ից ցածր տարիքի տղամարդկանց բոլոր աշխատանքային խմբերում զբաղվածները, ինչպես նաև 40-ից ցածր տարիքի կանանց բոլոր աշխատանքային խմբերում զբաղվածները, բացի Գ1 և Գ2 խմբերի զբաղվածներից: Հարկ է առանձնացնել այն «մաքուր» խմբերը, որոնք իրենց հետագա ծրագրերի մտադրության համար նշել են միայն Սիրիա վերադառնալու տարբերակը: Դրանք են՝ Գ1 և Գ2 խմբերի 40-ից բարձր տարիքի կանայք և Բ խմբի 40-ից ցածր տարիքի զբաղված տղամարդիկ: Հայաստանում հաստատվելու մտադրությունը տատանվում է հարցվածների 20-30%-ի սահմաններում՝ բոլոր սեռատարիքային և սոցիալ-մասնագիտական խմբերում: Իսկ որպես «մաքուր» խումբ կարելի է առանձնացնել Գ1 և Գ2 խմբերում զբաղված 40-ից ցածր տարիքի կանանց: Ադապտացման առաջին քայլը հիմնականում կատարել են մասնագիտական խմբի մարդիկ, որոնք էլ առավել հակված են հաստատվելու հայրենիքում:

Այլ երկիր տեղափոխվելու ցանկություն ունեցող հարցվածները հիմնականում Գ1 և Գ2 խմբերի բոլոր տարիքների տղամարդիկ են: Այլ երկիր տեղա-

փոխվելու մտադրություն ունեցողների «մաքուր» խումբ չկա: Իսկ միջին տոկոսային բաշխվածությունը բնորոշ է բոլոր սոցիալական խմբերին, բացի Բ խմբում ընդգրկված բոլոր տարիքների տղամարդկանցից և Գ1, Գ2 խմբերում զբաղված կանանցից, ինչպես նաև 40-ից բարձր չաշխատող և 40-ից ցածր տարիքի Բ խմբի կանանցից:

Եթե ներկայացնենք ստացված տվյալներն ըստ առանձին սոցիալ-մասնագիտական խմբերի, ապա կստանանք հետևյալ պատկերը. 40-ից ցածր տարիքի այն կանայք, ովքեր Սիրիայում զբաղված են եղել Գ2 խմբում, մտադիր են հաստատվել Հայաստանում, իսկ Գ1 խմբում զբաղված նույն սեռի ներկայացուցիչների պատասխանները գրեթե հավասարապես են բաշխվել միգրացիոն մտադրությունների երեք տարբերակների միջև: Այս տարիքի Բ խմբի զբաղված կանանց մտադրությունը միայն Սիրիա վերադառնալն է: Ա խմբում աշխատող 40-ից ցածր տարիքի կանայք հիմնականում մտադիր են վերադառնալ Սիրիա, ապա՝ մեկնել այլ երկիր կամ մնալ Հայաստանում: Այս տարիքի չաշխատողների խմբում ընդգրկված կանայք ընդհանրապես Հայաստանում մնալու մտադրություն չունեն, իսկ այլ երկիր կամ Սիրիա վերադառնալու տարբերակները բաշխվել են հավասարապես:

Իգական սեռի 40-ից բարձր տարիքի ներկայացուցիչները, ովքեր Սիրիայում եղել են Գ2 խմբում նույնությամբ կրկնում են 40-ից ցածր տարիքի Բ խմբի զբաղվածների վարքը: Գ1 խմբի աշխատողների հիմնական մասը մտադիր է վերադառնալ, ավելի քիչ մասը՝ մնալ Հայաստանում, մյուսները՝ մեկնել այլ երկիր: Նույն տարիքային խմբի ներկայացուցիչներն, ովքեր զբաղված են Բ խմբում, Հայաստանում մնալու մտադրություն չունեն և հավասարապես հակված են մեկնելու այլ երկիր և Սիրիա:

Ա խմբի 40-ից բարձր տարիքի կանայք հիմնականում մտադիր են վերադառնալ Սիրիա, ավելի քչերը՝ մեկնել այլ երկիր կամ մնալ Հայաստանում: Այս տարիքի չաշխատողների խմբում այլ երկիր մեկնելու մտադրությունն ընդհանրապես բացակայում է, իսկ մյուս երկու տարբերակները բաշխվել են հավասարաչափ:

Արական սեռի 40-ից ցածր տարիքի ներկայացուցիչները, ովքեր Սիրիայում զբաղված են եղել Գ2 խմբում, հետագա ծրագրերի առումով կրկնում են նույն զբաղվածությունն ունեցող 40-ից բարձր տարիքի տղամարդկանց խմբի համամասնությունը, իսկ Գ1 խմբի աշխատողների մոտ ավելացել է այլ երկիր մեկնել մտադրվածների թիվը՝ ի հաշիվ Սիրիա վերադառնալ մտադրվածների թվի: Բ խմբում զբաղվածների մտադրությունը նվազագույն չափով արտահայտվել է միայն Սիրիա վերադառնալու օգտին, մնացած տարբերակների ուղղությամբ մտադրվածություն չի նկատվել: Ա խմբում զբաղվածների հետագա ծրագրերում հավասարաչափ է բաշխվել Հայաստանում մնալու և Սիրիա մեկնելու մտադրություն ունեցողների թիվը, մեծամասնություն է կազմել այլ երկիր մեկնելու տարբերակը: Չաշխատողների խումբը, ի տարբերություն նա-

խորդի, առավելապես մտադիր է վերադառնալ Սիրիա, իսկ մյուս տարբերակների նախընտրությունը բաշխվել է հավասարաչափ:

Արական սեռի 40-ից բարձր տարիքի ներկայացուցիչները, ովքեր Սիրիայում զբաղված են եղել Գ2 խմբում, գրեթե հավասարապես մտադիր են վերադառնալ Սիրիա կամ գնալ որևէ այլ երկիր, ավելի պակաս՝ մնալ Հայաստանում: Գ1 աշխատողները գերազանցապես մտադիր են վերադառնալ Սիրիա, ապա նոր մնալ Հայաստանում կամ տեղափոխվել որևէ այլ երկիր: Ինչ վերաբերում է Բ խմբի զբաղվածներին, ապա այստեղ հետագա ծրագրերի մեջ բացակայում է այլ երկիր մեկնելու մտադրությունը: Չաշխատողների խմբում մտադրությունը՝ մեկնել Սիրիա, այլ երկիր կամ մնալ Հայաստանում, բաշխվել է հավասարապես: Հարցվածների մեջ Ա խմբի զբաղված արական սեռի 40-ից բարձր տարիքի ներկայացուցիչ չկա:

Բացի հարցվողների սոցիալական կազմից, կարևոր է ևս մեկ ազդեցիկ գործոնի քննարկումը «նորեկների» ադապտացիայի և հետագա ծրագրերի կողմնորոշման հարցում: Այդ գործոնը հայաստանյան միջավայրում սիրիահայերի անհանգստություններ են:

Ստորև բերված են Սիրիա վերադառնալու կամ այլ երկիր մեկնելու, Հայաստանում հաստատվելու մտադրություն ունեցող հարցվածների սոցիալական կազմը, անհանգստությունները Հայաստանի պայմաններում, ներգրավվածությունը Սիրիայի ազգային կառույցներում և հայաստանյան կազմակերպություններում (մարզական, մշակութային միություններ, ակումբներ, խմբակներ և այլն):

Գծապատկեր 6-ում արտահայտված է սիրիահայերի անհանգստությունների և մեկնելու մտադրությունների միջև կապը: Սիրիա վերադառնալու ցանկություն արտահայտած հարցվածների մոտ հիմնական անհանգստությունները կապված են տան վարձի (45%), աշխատանքի (28%) և աշխատավարձի սղության (11%) հետ, ապա՝ հարկային դաշտի, ապրուստի սղության և ուսման խնդիրները (համապատասխանաբար՝ 8%, 5% և 3%):

Հայաստանում հաստատվելու մտադրություն ունեցողների անհանգստությունները կապված են տան վարձի (36 %), հարկային դաշտի (21%) և աշխատավարձի սղության (14%), աշխատանքի (13%), ապրուստի սղության (7%) հետ: Հարցվածների 9%-ը չի նշել որևէ խնդիր:

Այլ երկիր մեկնել ցանկացողների մոտ առաջին երեք անհանգստությունները կապված են տան վարձի (41%), աշխատանքի (33%) և աշխատավարձի սղության (17%) հետ: Նրանք ավելի քիչ նշել են ապրուստի սղության (4%) և հարկային դաշտի խնդիրները (2%):

Այստեղ հիմնական նմանություն ենք նկատում այլ երկիր մեկնողների և Սիրիա վերադառնալու ցանակություն ունեցողների խմբերի անհանգստությունների առաջնահերթությունների միջև:

Հայաստանում մնալու ցանկություն ունեցողների մոտ առաջնահերթ են դառնում հարկային դաշտի հետ կապված խնդիրները, ինչը բացատրվում է

նրանով, որ այդ խումբն արդեն ադապտացման որոշակի փուլում է և սկսել է ներդնել իր ունեցած ֆինանսական միջոցները տնտեսական գործունեության որևէ բնագավառում, և, ըստ ամենայնի, արդեն բախվել է ՀՀ հարկային դաշտի խնդիրներին:

Գծապատկեր 6.
Սիրիահայերի անհանգստությունները՝
կախված հետագա մտադրություններից (% հարցվածներից)



Հատկանշական է, որ այնքան էլ կարևոր չէ, թե գաղթածը կոնկրետ ուր է ուզում մեկնել, առավել կարևոր է՝ նա նախատեսում է մնալ մուտքի երկրում, թե՝ ոչ: Այս առումով տնտեսական գործունեություն ծավալելու և հատկապես ֆինանսական միջոցներ ներդնելու փաստը կարող է առավել ցայտուն չափանիշը դառնալ ոչ միայն նրա նախնական տրամադրվածությունը հասկանալու, այլև չափագրելու միջավայրին ինտեգրման փուլային հատկանիշները:

Եվս մեկ կարևոր գործոն է համայնքի ազգային կառույցներում սիրիահայերի ներգրավվածության աստիճանը: Այսպես կոչված միջավայրային գործոնը սահմանում է այն, ինչ դուրս է մնում ֆորմալ ինստիտուտների դաշտից, ձևավորում է ազդեցության նոր տիրույթ, որն արժե դիտարկել մնացած գործոնների շարքում, երբեմն էլ, կախված իրավիճակից՝ առավել կարևորել:

Սիրիահայ համայնքում, որպես դասական գաղութի օրինակ, միջավայրային գործոնն առանձնահատուկ դրսևորումներ է ստանում՝ ընդհուպ ձեռք բերելով ֆորմալ կառուցվածք: Այդ մասին են վկայում համայնքում առկա տարատեսակ միություններն ու համայնքային կառույցները (որոնք հաճախ սերտաճում են կուսակցական գործունեության հետ): Նման երևույթը չի կարող իր ազդեցությունը չթողնել այդ համայնքից Հայաստան գաղթած անդամների վարքագծի վրա, մասնավորապես՝ նրանց հետագա գործողությունների վրա: Սա կարող է իր ազդեցությունն ունենալ սիրիահայերի՝ ազգային կառույցներում ներգրավվածության, հետագա մտադրությունների և տեղաշարժի վրա:

Այսպես օրինակ, ըստ հարցման տվյալների, Սիրիա վերադառնալու մտադրություն ունեցողների գերակշիռ մեծամասնությունը՝ 84%, ներգրավված է եղել համայնքի ազգային կառույցներում (տե՛ս գծապատկեր 7):

Գծապատկեր 7.
Սիրիայում ազգային կառույցներում ներգրավվածությունը՝ կախված հետագա մտադրություններից (% հարցվածներից)



Հայաստանում հաստատվելու և այլ երկիր գնալու ցանկություն հայտնած հարցվածների մեծամասնությունը նույնպես ներգրավված է եղել համայնքի ազգային կառույցներում (համապատասխանաբար՝ 75% և 69%): Տվյալները ցույց են տալիս, որ որքան փոքր է համայնքային կառույցներում ներգրավվածությունը, այնքան ավելի հեշտությամբ է խումբը հարմարվում միջավայրային փոփոխությանը և ավելի բաց է նոր միջավայրի նկատմամբ:

Այստեղ տեղին է համեմատել նախկինում Սիրիայի համայնքային կառույցներում ներգրավվածների թիվը ներկայումս Հայաստանում հաստատված սիրիահայերի հայաստանյան կազմակերպություններում (մարզական, մշակութային միություններ, ակումբներ, խմբակներ և այլն) ներգրավվածության հետ (տե՛ս գծապատկեր 8):

Գծապատկեր 8.
Սիրիահայերի ներգրավվածությունը Սիրիայի ազգային կառույցներում և հայաստանյան կազմակերպություններում (մարզական, մշակութային միություններ, ակումբներ, խմբակներ և այլն) (% հարցվածներից)



Ինչպես երևում է գծապատկերից՝ ներգրավվածության և՛ չափը, և՛ հարաբերակցությունը մեծ փոփոխություն են կրել: Դրա պատճառը, մի կողմից, այն օբյեկտիվ խնդիրներն են, որոնք վերաբերում են հենց կազմակերպություններին, մյուս կողմից՝ անձնային են, երբ հարցվողները տարբեր պատճառներով հրաժարվում են անդամակցել Հայաստանում գտնվող կազմակերպություններին: Առհասարակ, երկար ժամանակ որևէ միությանն անդամակցությունը դադարեցնելով՝ այլ օտար պայմաններում խմբի կենսագործունեությունը ենթարկվում է որոշակի որակական փոփոխությունների (ինչն էլ իր հերթին հանգեցնում է արժեհամակարգի փոփոխությունների): Դրանց առանձնահատկությունները սիրիահայերի համար դեռևս չափելի չեն: Սակայն, ելնելով համայնքային-միութենական վարքի ընդհանուր կանոններից, կարելի է ենթադրել, որ կոնկրետ գործառույթները (երաշխիքների սահմանում, վստահության մթնոլորտի պահպանում, փոխօգնության ձևավորում և այլն), որոնք կատարում էր համայնքային կառույցը տվյալ անհատի, խմբի համար, այլևս չեն իրականանում: Հետևաբար, նոր միջավայրում բախվելով նոր խնդիրների՝ հասարակական կառույցներում, միություններում ներգրավվելու հարցը ստանում է ավելի մեծ կարևորություն, քան նախկինում էր:

Կարող ենք ասել, որ հայրենիք եկած սիրիահայերի շրջանում ձևավորվել են երկու մեծ հոսքեր՝ տարանցիկ և կայուն: Այս խմբերի ձևավորման վրա ազդեցություն ունեն վերոնշյալ գործոնները՝ կապված նրանց սոցիալական կազմի, հայրենիքում ունեցած անհանգստությունների, սոցիալական ներգրավվածության և սոցիալ-մասնագիտական աղապտացման հետ: Նշված գործոններից յուրաքանչյուրն իր հերթին մեծ դեր ունի սիրիահայերի հետագա ծրագրերի կողմնորոշման հարցում, և դրանց համընկնումն էլ մեծամասամբ հանգեցնում է Հայաստանից ելքի որոշմանը:

Գրականություն

***Սիրիահայերը Հայաստանում....* 2015,**
Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները (խմբագիր Ռ. Կարապետյան). Երևան, «Գիտություն»:

***Barnes John*. 1954.**
Class and Committees in a Norwegian Island Parish. Human Relations, 7, 39-58.

***Карапетян Р. С.* 1991.**
Миграция в городах Армении. Эносоциологическое исследование. Ереван: Гитутюн, 95-96.

***Кузнецов П. С.* 1991.**
Адаптация как функция развития личности. Саратов: СГУ.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Էջադրումը և ձևավորումը
Արթուր Հարությունյանի

Շապիկը՝
Ռոման Հովսեփյանի

Habitus-ի խմբագրակազմը շնորհակալություն է հայտնում ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր **Հարություն Մարությանին** և **Մարիամ Շահմուրադյանին**՝ խմբագրական աշխատանքներին աջակցելու և խորհուրդների համար:

Շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ **Լևոն Աբրահամյանին**՝ իր հեղինակած երգիծանկարները տրամադրելու համար:

Խմբագրության հասցեն՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Հասցե՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի փ. 15,
Habitus-ի էլեկտրոնային փոստը՝ habitus.iae.am@gmail.com
Կայքը՝ www.iae.am, www.iae.am/hy/HABITUS

Editorial office:
Institute of Archaeology and Ethnography, NAS RA.
Address: 15 Charents str., 0025, Yerevan, Armenia
Email of Habitus: habitus.iae.am@gmail.com
Web page: www.iae.am, www.iae.am/en/Habitus-2

Տպագրված է «Հայկարլի ՍՊԸ» տպարանում
Հեռ. 091 206 115

Չափսը՝ 70×100 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
16.5 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 200 օրինակ:

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY · 2

HABITUS · 2